


# ԵՐԿՈՒ ՊԱՏԵՐԱԶՄ՝ ԵՐԿՈՒ ԴԱՇՆԱԳԻՐ

Posted on February 7, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



Հեղինակ՝ Գրիգոր Գրաճեան , Պեյրութ, 8 Փետրուար 2010

**« Սուրերու հովանու տակ կը գտնես քո հանգիստը »**



Արաբատառ այս նախադասութիւնը կը գրաւէ անկախ Հայաստանի առաջին արտաքին գործոց նախարար, Ալեքսանդր Խատիսեանի ուշադրութիւնը, երբ կը մտնէ Օսմանեան պետութեան պատերազմական նախարարութեան շէնքի սպասման սրահը, Պայազիտ հրապարակին վրայ, Պոլիս, տեսակցելու նախարար Էնվեր փաշայի հետ:

Հեղինակ՝ Գրիգոր Գրաճեան , Պեյրութ, 8 Փետրուար 2010

**« Սուրերու հովանու տակ կը գտնես քո հանգիստը »**



Արաբատառ այս նախադասութիւնը կը գրաւէ անկախ Հայաստանի առաջին արտաքին գործոց նախարար, Ալեքսանդր Խատիսեանի ուշադրութիւնը, երբ կը մտնէ Օսմանեան պետութեան պատերազմական նախարարութեան շէնքի սպասման սրահը, Պայազիտ հրապարակին վրայ, Պոլիս, տեսակցելու նախարար Էնվեր փաշայի հետ:

Թուական՝ Յունիս 1918:

Այցելութեան նպատակ՝ հրաւեր Հայաստանի կառավարութեան մասնակցելու Կեդրոնական Եւրոպայի երկիրներու (Գերմանիա, Աւստրո-Հունգարիա, Պուլկարիա, Թուրքիա) ժողովի մը, Պոլսոյ մէջ:

Խատիսեանի տեսակցութիւնները կ'ընդգրկէին արդարութեան նախարար՝ Խալիլ պէյ, Ներքին գործոց նախարար՝ Թալէաթ պէյ, պատերազմական նախարար՝ Էնվեր պէյ եւ այլ օսմանցի պետական անձնակազմներ: ( Հետագային, 30 հոկտեմբեր 1918-ի Մուտրոսի համաձայնագրով, երբ Օսմանեան Պետութիւնը պարտուած կը յայտարարուէր, Իթթիհատի վերնախաւի «պէյ»երը թաքստոցներ կը փնտռէին, իրենց պատերազմի ընթացքին գործած ոճիրներէն փախչելու համար: Սակայն հայ վրիժառու բազուկը կը հետապնդէր յանցագործները եւ անոնց արդար պատիժը կը տնօրինէր):

Պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, հայ եւ թուրք բանակները ճակատեցան իրար դէմ 1918 մայիսի վերջերը Սարդարապատի, Ղարաքիլիսէի եւ Պաշ Ապարանի ռազմաճակատներուն վրայ:

«Որոտում էին թնդանօթները, որոնց գոռոցը հասնում էր մինչեւ Երեւան». կը պատմէ վարչապետ Ս. Վրացեան:

Տենդոտ եռ ու զեռի մէջ էր Երեւանը, ուրկէ սայլերով, էշերով, ձեռքերով, երիտասարդ թէ ծեր, կռուողներուն ռազմամթերք, հաց, ջուր կը հասցնէին:

«Ամբողջ երկիրը մի մարդ, մի շունչ դարձած՝ կռուում էր մահացու թշնամուն դեմ»։ կը գրե Վրացեան:

Հայ զէնքի ուժը մեծ տպաւորութիւն ձգեց օտար զինուորական մասնագետներու վրայ: Կ'արժէ յիշատակել Ֆրանսացի հրամանատար՝ Պուլատեպարի խօսքերը,

« Շէֆքի փաշայի ամբողջ բանակը կանգնած էր զօր. Սիլիկեանի հրամանատարութեան տակ գտնուող երկրորդ հայկական տիվիզիայի դէմ: Մայիս 24-ին զօր. Սիլիկեանը այնպիսի ուժով գրոհ տուաւ թուրքերուն վրայ, որ կատարելապէս ջախջախեց զանոնք եւ հայկական հեծելազօրքը հալածեց թուրքերը մինչեւ Ալեքսանդրապոլի բարձունքները: Միմիայն ռազմամթերքի պակասն էր որ կանգնեցուց այդ հետապնդումը»:

Իսկ, Էնվեր փաշա, տպաւորուած հայկական բանակի մարտունակութենէն, Վեհիպ փաշայի բերնով կ'առաջարկէր հայ եւ թուրք բանակներու զինակցութիւն մը, միասնաբար արշաւելու Պաղտատի վրայ:

Թէեւ փրկուած էր Երեւանը՝ Հայաստանի ապագայ մայրաքաղաքը, սակայն զինուորական թէ քաղաքական գետնի վրայ, մարտահրաւերները բազմաթիւ էին: Վրացիներ եւ ազերիներ, որոնք առանձին ձգած էին հայերը արշաւող օսմանեան բանակին դիմաց, կը լքէին Սեյմը, Անդրկովկասեան Համադաշնակցութիւնը եւ կը յայտարարէին իրենց երկրին անկախութիւնը: Հայերուն կը մնար յաղթական պատերազմէ մը ետք, անկախութիւն հռչակել 28 մայիս, 1918-ին:

Հայաստանի հանրապետութեան ստեղծումը բաւարար չէր սակայն ապահովելու հողատարածքի ամբողջականութիւնը եւ ժողովուրդի անվտանգութիւնը: Երեւանը ապաստան տուած էր առ նուազն կէս միլիոնի հասնող, մեծամասնութեամբ արեւմտահայ գաղթականներու, իսկ թրքական բանակի միաւորները, հայկական դիրքերէն ոչ շատ հեռու, իրենց թնդանօթները ուղղած քաղաքին վրայ, սպառնալիք էին նորաստեղծ հանրապետութեան:

Երկու դրացի երկիրներուն՝ Հայաստանի եւ Օսմանեան կայսրութեան միջեւ խաղաղութեան խորհրդաժողով մը հրամայական էր, մանաւանդ հայութեան համար: Այս նպատակաւ Թիֆլիս ժամանակաւորապէս հաստատուած Հայոց Ազգային Խորհուրդը, Պաթում կը գործուղէ հաշտութեան դաշնագրի պատուիրակութիւն մը, որու նախագահն էր Ալ. Խատիսեան. անդամներն էին, Մ. Պապաջանեան եւ Յ. Քաջազնունի, հետագային՝ Հայաստանի առաջին կառավարութեան վարչապետը:

Պետական մակարդակով հայ եւ թուրք դիւանագիտական խօսակցութիւնները, առաջին անգամ ըլլալով պատմութեան մէջ տեղի ունեցան Պաթումի մէջ, 1918, մայիս 28էն յունիս 4, որու յաջորդեց անկախ Հայաստանի առաջին վաւերաթուղթի ստորագրութիւնը օտար պետութեան մը՝ Օսմանեան կայսրութեան հետ: Հայ-թուրք բանակցութիւնները տեղի կ'ունենային լարուած մթնոլորտի մը մէջ: Թէեւ հայերը շահած էին ճակատամարտ մը եւ կասեցուցած թրքական բանակի արշաւանքը, թշնամին իր գերակշիռ ուժով,

վերջնագրով մը իր պայմանները կ'ուզէր պարտադրել հայկական կողմին վրայ: Թուրք բանագնաց՝ Վեհիպ փաշան, առաջին նիստին իսկ, կը ներկայացնէ Հայաստանին սահմանուած հողատարծք մը որը հազիւ 9000 քառ. քիլոմէթր էր: Հայերուն սահմանուած հողամասը չափազանց փոքր, կտրուած էր ծովէն եւ չէր գոհացներ հայ ժողովուրդի պահանջները: Թուրքերուն գծած Հայաստանի այս սահմանները պատճառ պիտի դառնային հայ-թուրք յարատեւ թշնամութեան: Հայկական պատուիրակութեան առարկութիւններուն, թուրքերը կը մնան անդդուելի, միշտ պատասխանելով թէ՛ այդ բոլոր հարցերը լուծում կրնան ստանալ ապագային, « բարի դրացիական յարաբերութիւններու» ստեղծումով: Երկար բանակցութիւններէ ետք, բոլոր թուղթերը կը պատրաստուին եւ կ'որոշուի դաշնագրի ստորագրման օրը:

Ալ. Խատիսեան ականատեսի իր վկայութիւնը կու տայ հանդիսաւոր արարողութեան:

« Երկու կողմերն ալ հետեւեալ օրը ներկայացան լիակատար կազմով եւ տօնական հագուստով: Թրքական պատուիրակութեան քարտուղար Մուսիր պէյ դառնալով ինծի ըսաւ. - Այսպէս կը կատարուի պետութեանց պատմութիւնը: Պէտք չէ հոգ ընել յաւիտենական ոչինչ կայ. դաշնագիրներն ալ ժամանակաւոր են»: « Ստորագրութենէն ետք», կ'աւելցնէ Խատիսեան, « Խալիլ պէյ եւ ես ողջոյնի եւ շնորհաւորանքի ճառեր խօսեցանք ու սեղմեցինք միմեանց ձեռքերը»:

\* \* \*

Հայկական եւ թրքական բանակները երկրորդ եւ վերջին (ցարդ) անգամ ըլլալով ճակատեցան Նախկին փախումէն մօտ երկու տարի ետք՝ 1920 սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներուն: Արդիւնքը, հայկական բանակի ամբողջական պարտութիւնն էր որու յաջորդեց նոյնքան ծանր Ալեքսանդրապոլի դաշնագիրը, Հայաստանի կնքած երկրորդ դաշնագիրը Թուրքիոյ հետ:

Մայիսէն սկսեալ, թրքական բանակը պատրաստութիւնները կը տեսներ, իսկ օգոստոսին, հայկական զինեալ ուժերու առաջատար դիրքերը կ'ենթարկուէին թրքական բանակի յարձակումներուն: Իսկական պատերազմը սկսաւ 23 սեպտեմբերին: Մի քանի ամիսներու ընթացքին, Հայաստան կորսնցուց Նախորդող երկու տարիներուն արիւնով եւ քրտինքով շահուած արեւմտահայաստանէն մեծ տարածքներ որոնք գրաւուած էին հայկական բանակին կողմէ 1919-էն սկսեալ:

Կատաղի բախումներ տեղի ունեցան Սուրմալուի ճակատին վրայ: Թրքական բանակը, քրտական զինեալ խումբերու օգնութեամբ, յամառօրէն փորձեց Դրօի հրամանատարութեան տակ գտնուող հայկական պաշտպանողական գիծը ճեղքել եւ հասնիլ Երեւան, սակայն ի զուր: Բոլորովին այլ ընթացք ստացան դէպքերը Կարսի ճակատին վրայ: Թրքական գերակշիռ զինուորական ուժին դիմաց, հայկական բանակի միաւորները տեւական Նահանջի մէջ մնացին եւ չյաջողեցան ծրագրուած հակայարձակողականը կազմակերպել:

Չհնուորական, քաղաքական եւ մարդկային անկիւնէն դիտած, Կարսի անկումը ամենէն ծանր հարուածն էր Հայաստանին համար: Կարս քաղաքն ու իր նշանաւոր բերդը, ըստ զինուորական մասնագետներու, կրնար ամիսներ դիմադրել թշնամի յարձակումներուն, սակայն, մէկ գիշերուայ մէջ եւ առանց կռուի, անձնատուր եղաւ: Կարսի կորուստով, մեծապէս տուժեց նաեւ հայկական պետութեան վարկը: Իսկ Կարսէն, թուրքերը տարին իրենց հետ մեծ քանակութեամբ ռազմամթերք, պարենամթերք եւ գերի ինկած մօտ 3000 հայ զինուորներ իրենց 150 հայ սպաներով: Հետագային, զինուորներէն միայն 300 հոգի գերութենէ վերադարձան:

Որքան որ պատմութեան մէջ յաղթանակը հպարտութեան եւ յիշատակումի արժանի է, նոյնպէս պարտութիւնը քննարկումի եւ խորհրդածութեան նիւթ պետք է դառնայ:

Հայկական բանակի պարտութեան պատճառները բազմաթիւ են եւ ակնյայտ.

- Սելրի դաշնագրով (10 օգոստոս, 1920-ին ) ստեղծուած էր թուրք-սովետ հասարակ յայտարար մը զինուորապէս ջնջելու «Անդանդ»-ի երկիրներու(Անգլիա եւ Ֆրանսա) հաւանական խարխիս, Հայաստանը:
- Երեւանի մէջ գտնուող հայկական բանակի բարձր հրամանատարութեան եւ ճակատի վրայ եղող զինուորականներուն միջեւ հաղորդակցութեան կապերը զգալիօրէն տկար էին:
- Բանակի բարձր խաւի զինուորականներ, մանաւանդ Կարսի ճակատին վրայ, ընդհանրապէս ռուսական դաստիարակութեամբ, նոյնիսկ ռուսախօս, պատերազմելու տրամադրութենէն զուրկ էին:
- Հայկական կողմը կարելիութիւնը չ'ունէր թրքական բանակի շարժումները եւ անոնց կարողականութիւնը լրտեսելու, սահմանէն անդին հայ տարրին չգոյութեան պատճառաւ:
- Հայ քաղաքական եւ զինուորական պատասխանատուները թերազնահատեցին թրքական բանակին ուժն ու կազմակերպուածութիւնը:
- 1920 մայիս 1-ի բոլշեւիկեան յեղափոխութեան ծախող փորձէն ետք, հայկական բանակէն ներս երկբեղկումը զգալի էր:
- Համայնավար գործակալներ, իրենց քարոզչութեամբ կը թելադրէին զինուորներուն եւ ժողովուրդին զէնքերը վար առնել եւ չկռուիլ յարձակող թուրքին դէմ:
- Երկու տարուայ երկարատեւ պատերազմներէ ետք վրացիներու, ազերիներու, քիւրտերու եւ համայնավարներու դէմ, հայ զինուորը յոգնած եւ ուժասպառ էր:
- Հայ քաղաքագետներ սխալ ենթադրութիւններ կատարեցին. թէ, թուրքերը ի վիճակի չեն յարձակելու Հայաստանի վրայ երբ յունական բանակը գրաւած էր հիւսիսային Անատոլուն: Թէ, Դաշնակից երկիրները՝ Անգլիա, Ֆրանսա, Իտալիա, թոյլ պիտի չտան թուրքերուն որպէսզի յարձակին Հայաստանի վրայ: Թէ՛ Վրաստան պիտի միանայ Հայաստանին թրքական յարձակումի մը պարագային:

Կորսնցնել է տք Կարսը, Արտահանը եւ Արաքս գետի արեւմտեան հողատարածքը, Հայաստան պարտադրաբար կը նստեր թուրքիոյ հետ հաշտութեան խորհրդաժողովի: Ալեքսանդրապոլ մեկնող հայկական պատուիրակութեան նախագահն էր Ալ. Խատիսեան իսկ կազմին մէջ էին Աբր. Գիւլիանդեան( ելեւմտական նախարար) եւ Ստեփան Դորդանեան (Կարսի նահանգապետ): Թրքական կողմը կը նախագահէր զօր. Քեազիմ Քարապէքիր, թրքական բանակի գլխաւոր հրամանատարը:

Առաջին նիստին իսկ, Քարապէքիր կը դնէ Թուրքիոյ հիմնական պահանջքը. Հայաստան պետք է հրաժարի Սելրի դաշնագրէն:

Խատիսեան հեռագրով կը կապուի վարչապետ Ս. Վրացեանի հետ եւ կը ստանայ կառավարութեան համաձայնութիւնը Սելրի դաշնագրէն հրաժարելու գծով: Երբ թրքական կողմին կը փոխանցուի Հայաստանի կառավարութեան դրական պատասխանը, Քարապէքիր կը յայտարարէ.« Այժմ, երբ մենք ազատուեցանք եւրոպական իմպերիալիստներու ճնշումէն, կարող ենք խօսիլ ազատ իբրեւ երկու հարեւան ժողովուրդներ»:

Բանագնաց Խատիսեան, ամբողջ հայութեան հոգեկան ծանր տագնապը կը մարմնաւորէ հետեւեալ խօսքերով.« Կեանքիս մէջ երկրորդ անգամ ինձ վիճակուեցաւ ծանր րոպէներ ապրիլ Հայաստանի սահմաններու ինդրի առթիւ: Առաջին անգամ 1918 թ. Յունիսին, Պաթում, երկրորդ անգամ Ալեքսանդրապոլ, այս օրերուն: Մենք նորէն տեսանք Հայաստանը երկաթ փականքներու մէջ սեղմուած, առանց Թրքահայաստանի, առանց Կարսի նահանգի, առանց Նախիջեւանի, առանց Նոյնիսկ Սուրմալուի»:

Ալեքսանդրապոլի հայ-թուրք դաշնագիրը ստորագրուեցաւ Հայաստանի խորհրդայնացումէն մօտ 15 ժամ ետք, 1920 Դեկտեմբեր 3, առաւօտ ժամը 2-ին:

Հայաստանի առաջին հանրապետութեան երկու տարիները, 1918-1920, կը կազմեն հայոց պատմութեան ամենէն նշանակալից եւ ճակատագրական ժամանակաշրջանը: Յեղասպանութենէն ետք, ոտքի կանգնելու, գոյատեւման համար կռուելու կամ հաշտութիւն կնքելու գերմարդկային ճիգերը, ճիշտ եւ սխալ որոշումներով հունաւորուած, ապացոյց են ազգերու ընտանիքէն ներս տեղ գրաւելու հայութեան վճռականութեան:

Դրացի ժողովուրդներու եւ երկիրներու միջեւ պատերազմը եւ խաղաղ գոյակցութիւնը առկայ են յաճախ: Անխուսափելի իրականութիւն է, որ զօրաւոր կողմը զենքի ուժով եւ դիւանագիտութեամբ իր կամքը կը պարտադրէ տկարին: Հետեւաբար հայ ժողովուրդին կը մնայ լարել ուժերը, ընտրել յարմարագոյն միջոցներն ու զենքերը, շարունակելու համար երթը:

## **Օգտագործուած աղբիւրներ՝**

- Վրացեան Ս. «Հայաստանի Հանրապետութիւն», Փարիզ, 1928
- Խատիսեան Ալ. «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը», տպարան Համազգային, ք. Տպ. Պէյրուք, 1968
- Եազըճեան Գ. «Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները», Երեւան, 2007
- Hovannisian R, " The Republic of Armenia" vol.1-4, University of California Press, 1996

